Հաստատված է՝
Հայկական բժշկական ինստիտուտի
Ռեկտորի 27.08.2019թ.
թիվ 764/16 հրամանով
Ընդունված է՝
Հայկական բժշկական ինստիտուտի
գիտական խորհրդի 27.08.2019թ.
թիվ 51 նիստում

ռեկտոր՝ Գ.Հ.Մխոյան

(ստորագրություն)

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019թ.

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԲԻ-ի որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը ուղղված է ինստիտուտի որակի ապահովման համակարգի բարելավմանը և զարգացմանը:

Ինստիտուտում որակի ներքին ապահովման համակարգի *վերանայումը* ենթադրում է որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսների վերլուծությունը, վերանայումը կամ վերափոխումը:

1. ***Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հիմք կարող են հանդիսանալ*** `
    1) Ինստիտուտի որակի ապահովման քաղաքականությունը,
    2) Ինստիտուտի որակի ապահովման ռազմավարությունը,
    3) Ինստիտուտի բոլոր ոլորտների գործունեության մշտադիտարկման և գնահատման արդյունքները:
    4) Ինստիտուտի որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի վերլուծության արդյունքները, (SWOT վերլուծությունը),
    5) Որակի ապահովման համակարգի բենչմարքինգի արդյունքները,
    6) Ինստիտուտի շահակիցների որակի ապահովման համակարգի վերաբերյալ կարծիքների վերլուծության արդյունքները:
2. ***Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման գործիքներ կարող են հանդիսանալ***՝
    1) Ինստիտուտի որակի ապահովման ներքին համակարգի բարելավմանը և վերափոխմանը ուղղված ռեկտորի հրամանները,
    2) Որակի ներքին ապահովման համակարգի վերափոխմանը ուղղված գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումների արձանագրությունները,
    3) Շահակիցներից ուղղված հարցման թերթիկները:
3. ***Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման մեխանիզմներ կարող են հանդիսանալ***՝
    1) Մշտադիտարկումները,
    2) Վերանայմանը ուղղված Գիտական խորհրդի որոշումները
    3) Ուղղիչ գործողությունները,
    4) Հարցումները:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՀԲԻ-Ի ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

ՀԲԻ որակի ապահովման պլանավորումը և վերանայումը հիմնված է՝ Պլանավորում-Իրականացում-Գնահատում-Վերանայում *(Պ-Ի-Գ-Վ)* մեխանիզմի վրա և բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

1) պլանավորման շրջանակ,
2) պարբերական պլանավորման և վերանայման շրջափուլ,
3) ֆակուլտետային և կառավարչական կառույցների վերանայում,
4) մասնագիտական հավատարմագրում,
5) ՄԿԾ-երի, դասընթացների ծրագրերի, դասավանդման մեթոդների պլանավորում, գնահատում և վերանայում,
6) պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատում և վերանայում,
7) շահակիցների շրջանում հարցումների կազմակերպում և անկետավորում,
8) ինստիտուտի գործունեության արդյունավետության տարեկան գնահատում և վերանայում,
9) բենչմարքինգ:

2. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Որակի ապահովման համակարգի վերանայման նպատակն է որակի ապահովման համակարգի բարելավումը և կատարելագործումը:

1. ***Որակի ապահովման համակարգի վերանայման խնդիրներն են հետաքրքրվել***
   1) Ինստիտուտի որակի ապահովման համակարգի աշխատանքի արդյունավետությունը տարբեր մակարդակների վրա,
   2) Մասնագիտությունների կրթական ծրագրերի արդիականությունը,
   3) Ինստիտուտի դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը:

2. ***Որակի ապահովման համակարգի վերանայման համար անհրաժեշտ է կատարել***
   1) որակի ապահովմանն ուղղված ռազմավարության վերանայում և կատարելագործում,
   2) որակի ապահովմանն ուղղված քաղաքականության և ընթացակարգերի վերանայում և կատարելագործում,
   3) որակի ապահովման համակարգի կառուցվածքային փոփոխություններ,
   4) մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատում, վերանայում և կատարելագործում,
   5) դասախոսական կազմի աշխատանքի աղյունավետության գնահատում և զարգացում,
   6) շահակիցների հետ հետադարձ կապի ապահովում,
   7) բենչմարքինգի կազմակերպում: